ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՑ ԳՐՔԵՐ

Յոթերորդ հաղորդում

Դավիթը Քրիստոսի՝ իրական Դավթի,
Աստծու գալիք թագավորության Թագավորի նախատիպ

Գրվածքների ընթերցում. Ա Թգ 21:1-6, Բ Թգ 7:16, 23:1-7,
Ամս 9:11-12, Մտթ 1:6, 12:1-4

I. Դավիթը Քրիստոսի՝ իրական Դավթի նախատիպն է՝ Ա Թգ 21:1-6, Բ Թգ 23:1-7, Մտթ 12:1-4.

Ա. Դավիթը Քրիստոսի ամենալիարժեք նախատիպն է՝ բացահայտված Հին Կտակարանում, որն ընդգրկում է ամենաերկար ժամանակաշրջանը. Նոր Կտակարանը նույնպես հստակորեն բացահայտում է, որ Դավիթը Քրիստոսի նախատիպն է՝ Մտթ 12:3:

Բ. Մտթ 12-րդ գլխում ցույց տրված սկզբունքի համապատասխան, որ Քրիստոսն ավելի մեծ է բոլոր նախատիպերից, ավելի մեծ, քան բոլոր իրերն ու անձերը, որոնք Նրա նախատիպերն են Հին Կտակարանում, Քրիստոսն ավելի մեծ Դավիթն է.

1. Մտթ 12:3-4-ում Տիրոջ ասածը ենթադրում է, որ Նա իրական Դավիթն է.
   ա. Դավիթն ուներ հետևորդներ, և Քրիստոսը՝ իրական Դավիթը, նույնպես ուներ հետևորդներ՝ Իր աշակերտները:
   բ. Այս ամենը ենթադրում է, որ Դավիթն ու իր հետևորդները Քրիստոսի և Նրա աշակերտների նախատիպն էին, նախապատկերը:
2. Մտթ 12:3-4-ում Տիրոջ ասածը նաև ենթադրում է քահանայությունից տնօրինական անցումը դեպի թագավորում.
   ա. Դավթի գալուստը փոխեց տնօրինությունը՝ քահանաների դարաշրջանից թագավորների դարաշրջանի, որում թագավորները քահանաներից վեր էին:
   բ. Քրիստոսի գալուստով նաև փոխվեց տնօրինությունը, այս անգամ օրենքի դարաշրջանից շնորհքի դարաշրջանի, որում Քրիստոսն ամեն ինչից վեր է:
   գ. Մտթ 1:6-ում Դավիթը կոչվում է «թագավոր», քանի որ հենց նրա միջոցով բերվեց թագավորությունը՝ թագավորմամբ. նա երկու դարաշրջանների ուղենիշն էր, մի դարաշրջանի ավարտը և մյուս դարաշրջանի սկիզբը:

Գ. Այն, որ Դավիթը չարչարվող Քրիստոսի նախատիպն է, բացահայտված է Սղմ 22, 109 և 110-ում.

1. Սղմ 22-ում տեսնում ենք չարչարվող Դավթին, ով Իր մահվան միջով անցնող չարչարվող Քրիստոսի նախատիպն է՝ խխ. 1ա, 6-21:
2. Սղմ 109-ը Դավթի բերած աղոթքն է իր չարչարանքների մասին.
   ա. Այստեղ Դավիթը Քրիստոսի նախատիպն է, և Դավթի չարչարանքները Քրիստոսի չարչարանքների նախատիպն են:

բ. Իր չարչարանքների վերաբերյալ Դավթի արած աղոթքը Քրիստոսի աղոթքի նախատիպն է:

3. Սղմ 109-ի աղոթքի պատասխանը Սղմ 110-ում է.

ա. Քանի որ Սղմ 110-ը Դավթի՝ որպես Քրիստոսի նախատիպի Սղմ 109-ում արած աղոթքի պատասխանն է, Սղմ 110-ը պետք է դիտարկել որպես Քրիստոսի աղոթքի պատասխան՝ Եբր 5:7:

բ. Աստված այս աղոթքին ոչ միայն Քրիստոսի հարության միջոցով պատասխանեց, այլև Քրիստոսի համբարձմամբ՝ 2:23-24, 32-33, 5:31:

Դ. Դավիթը Քրիստոսի նախատիպն է նաև իր վերջին խոսքերով՝ Բ Թգ 23:1-7.

1. Դավիթը՝ Քրիստոսի նախատիպը, մարդկանց մեջ արդարաբար Աստծու վախով իշխեց՝ խ. 3բ:

2. Դավիթը՝ Քրիստոսի նախատիպը, նման էր առավոտվա լույսին, երբ արևը ծագում է առանց ամպերի՝ խ. 4:

3. Երբ Քրիստոսը մարդկանց միջավայրում արդարաբար իշխում է Աստծու վախով, Նա նման է առավոտվա լույսին, երբ արևը ծագում է, «ինչպես երբ անձրևից հետո արևը շողում է, և նուրբ խոտը երկրից բուսնում է»՝ խ. 4բ:

II. Դավիթ թագավորը Քրիստոս Թագավորի նախատիպն է՝ Ա Թգ 16:12, Բ Թգ 16:5-6, Մտթ 1:6, 2:2, 27:1, Հյտ 19:16.

Ա. Դավիթ թագավորը ներկայացնում է Քրիստոսին՝ Աստծու գալիք թագավորության Թագավորին, որպես Աստծու կողմից հաստատված թագավորի, պատերազմող թագավորի և մարդկանց կողմից արհամարհված ու մերժված թագավորի՝ Ա Թգ 16:12, Բ Թգ 16:5-6.

1. Դավթի նախատիպով ցույց տրված Քրիստոսը մարտնչող Թագավորն է, ով Իր բոլոր թշնամիներին հաղթել է, ձեռք է բերել երկիրը, և եկեղեցու՝ որպես Աստծու տաճարի կառուցման համար պատրաստել է բոլոր նյութերը՝ Ա Մնց 21:22-25, 29:29:

2. Այն բանից հետո, երբ Քրիստոսը կտիրանա երկրին, Նա երկրի վրա կթագավորի որպես թագավորության մեջ եղող Թագավորը՝ Իր հաղթող հավատացյալների հետ իշխելով ազգերի վրա՝ Հյտ 20:4, 6, 2:26-27:

3. Որպես եկող Թագավորը՝ Քրիստոսը հազարամյայում կլինի եկող Աստծու թագավորության Գլուխը և կենտրոնը. սա կլինի Եսյ 32:1, Երմ 23:5 և Զք 14:9 ու 17-րդ խոսքերի իրագործումը:

Բ. Մարգարեները Դավթի և Քրիստոսի մասին խոսում էին որպես մեկ անձի՝ Երմ 30:9, Եզկ 34:23-24, 37:24-25, Օվս 3:5, Ամս 9:11.

1. «Նրանք կծառայեն Եհովային՝ իրենց Աստծուն, և Դավթին՝ իրենց թագավորին, ում Ես կբարձրացնեմ նրանց համար»՝ Երմ 30:9:

2. Սա վերաբերում է Քրիստոսին, ով իսկական Դավիթն է, և ով վերա-

կերտման ժամանակ, այսինքն՝ հազարամյայում, կլինի Թագավորը՝ Եսյ 32:1, Հյտ 20:4, 6:

3. «Ես նրանց վրա մի Հովիվ կկարգեմ՝ Իմ Ծառա Դավթին, ու Նա կկերակրի նրանց և նրանց Հովիվը կլինի.... Եվ Իմ Ծառա Դավիթը նրանց միջավայրում կլինի Իշխան»՝ Եզկ 34:23-24.
   ա. Դավիթը Քրիստոսի՝ Աստծու հոտի իրական Հովվի նախատիպն է, ով կերակրում է մեզ ու մեզ հագեցում ու բավարարում է բերում՝ Հվի 10:11, Եբր 13:20, Եսյ 9:7, Օվս 3:5, Մք 5:2, Ղկս 1:32-33:
   բ. Երբ Տեր Հիսուսը գալիս է որպես Հովիվ՝ մեզ համար հոգ տանելու, Նա գալիս է նաև որպես Թագավոր՝ մեզ կառավարելու համար. Տիրոջ՝ որպես մեր Հովվի մեզ համար հոգ տանելու արդյունքն այն է լինում, որ մենք հնազանդվում ենք Նրան՝ որպես մեր Թագավորի, և ենթարկվում Նրա թագավորմանն ու Նրա գահին մեր ներսում:
4. «Իմ Ծառա Դավիթը նրանց վրա Թագավոր կլինի, և նրանք բոլորը մեկ Հովիվ կունենան»՝ Եզկ 37:24.
   ա. Սա վերաբերում է մեր Հովիվ Քրիստոսին, ով իրական Դավիթն է:
   բ. Իսրայելի հետ կապված մարգարեությունը, որ ներկայացված է այստեղ, կիրականանա հազարամյայում՝ վերակերտման դարաշրջանում, և հավիտենությունում՝ նոր երկնքում և նոր երկրում:
5. «Այնուհետև Իսրայելի զավակները կվերադառնան ու կփնտրեն Եհովային՝ իրենց Աստծուն, և Դավթին՝ իրենց Թագավորին, ու նրանք վախով կգան Եհովայի և Նրա բարության մոտ վերջին օրերին»՝ Օվս 3:5.
   ա. Դավիթը՝ նրանց թագավորը, Քրիստոսն է հազարամյայում:
   բ. «Վերջին օրերը» վերաբերում են վերակերտման դարաշրջանին՝ Մտթ 19:28:

Գ. Տիրոջ գալիք թագավորման ժամանակ Աստծու իշխանությունն ու փառքը լիովին հայտնի կդարձվեն, և ողջ երկիրը՝ իր ժողովուրդներով, կբերվի արդարության, խաղաղության, ուրախության և Աստծու ստեղծագործության ողջ օրհնության մեջ՝ 6:13, Եսյ 32:1, 16-18, 35:1-2, 5-7:

III. Դավթի թագավորությունը Քրիստոսի գալիք թագավորության նախատիպն է՝ Բ Թգ 7:12, 16, Մրկ 11:10, Հյտ 11:15.

Ա. Նաթան մարգարեի միջոցով Եհովան խոսեց Դավթի հետ՝ ասելով. «Քո տունը և քո թագավորությունը հավիտյան կամրապնդվեն քո առջև. քո գահը հավիտյան կհաստատվի»՝ Բ Թգ 7:16.
1. Դավթի տունը վերաբերում է Քրիստոսին, Դավթի թագավորությունը վերաբերում է Քրիստոսի թագավորությանը, իսկ Դավթի գահը վերաբերում է Քրիստոսի գահին՝ խ. 16:
2. Դավթի թագավորությունը Քրիստոսի թագավորությունն է, և Դավիթն ու Քրիստոսը մեկ գահ ունեն՝ Եսյ 9:7, 16:5, Ղկս 1:32, Գրծ 2:29-31:

3. Գաբրիել հրեշտակապետի կողմից փոխանցված Աստծու խոսքը նույնպես հաստատեց, որ Դավթի ուխտը Քրիստոսի մեջ է կատարվելու՝ Ղկս 1:32-33:
4. Դավթին տված Աստծու խոստումը, որ նրա տունն ու թագավորությունը կամրապնդվեն, և որ նրա գահը հավիտյան կհաստատվի, կատարվեց Քրիստոսի մեջ:
5. Դավթին տված Աստծու խոստման համաձայն՝ Քրիստոսը կժառանգի Դավթի գահը, որպեսզի հավիտյան թագավորի Հակոբի տան վրա, և Նրա թագավորությունը վերջ չի ունենա՝ խխ. 32-33.
   ա. Գալիք դարաշրջանում հազարամյա թագավորության երկրային մասը կլինի Մեսիական թագավորությունը, որը Մտթ 13:41-ում կոչվում է Մարդու Որդու թագավորություն՝ Հյտ 11:15:
   բ. Սա կլինի Իսրայելի վերակերտված թագավորությունը (Գրծ 1:6), Դավթի խորանը՝ Դավթի թագավորությունը, որը Տերը կվերակառուցի՝ 15:16, Մրկ 11:10:

Բ. Ամովսը մարգարեացավ, որ որպես Թագավոր՝ Քրիստոսը կբարձրացնի «Դավթի ընկած վրանը»՝ Ամս 9:11.
1. Դավթի վրանը Դավթի թագավորությունն է և Դավթի թագավորական ընտանիքը՝ Բ Թգ 7:12, 16:
2. Այդ թագավորությունը՝ այդ թագավորական ընտանիքը, ընկավ, երբ Նաբուգոդոնոսորը եկավ Իսրայել ազգին գերեվարելու, երկիրն ավերելու, քաղաքն այրելու, տաճարը ոչնչացնելու և թագավորին տանելու՝ Բ Թգ 25:1-21:
3. Ամովսի մարգարեությամբ Աստված խոստացավ, որ մի որոշակի օր Դավթի թագավորությունը և Դավթի ընտանիքը կվերականգնվեն, և բոլոր ազգերը կկոչվեն Եհովայի անունով՝ Ամս 9:11-12:
4. Այս մարգարեությունը ցույց է տալիս, որ Քրիստոսը կվերադառնա և կլինի իսկական Դավիթը (Եսյ 9:7, 16:5, Երմ 30:9, Եզկ 34:23-24, 37:24-25, Օվս 3:5) և կվերակառուցի, այսինքն՝ կվերակերտի Իր նախահայր Դավթի թագավորությունը՝ ողջ տիեզերքը վերակերտելու համար:
5. Այդ ժամանակ Դավթի թագավորությունը կդառնա Քրիստոսի և Աստծու թագավորությունը հավիտյան՝ Հյտ 11:15:
6. Տերը կնստի Դավթի գահին ու կթագավորի Հակոբի, այսինքն՝ հրեա ժողովրդին վրա (Ղկս 1:32-33), և Նա կիշխի երկրի վրա եղող ազգերի վրա հազարամյայում՝ Սղմ 2:8, 72:8, Դնլ 7:14, 2:35:

© 2021 Living Stream Ministry